ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/68

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ» ՊՈԱԿ

Բողոք բերող՝«Էլեկտրոգուպ» ՍՊԸ

Համանման բողոք բերող՝ «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ և «Ֆոր Սթեյջ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ Հ. Ղազարյանի, Լ. Բոյաջյանի

Բողոք բերող «Էլեկտրոգուպ» ՍՊԸ-ի, «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ի և «Ֆոր Սթեյջ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Մնացականյան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցում, ձայնային սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էլեկտրոգուպ» ՍՊԸ-ի, «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ի և «Ֆոր Սթեյջ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություններ) կողմից համապատասխանաբար

20.09.2019թ.-ին ներկայացված բողոքը և 26.09.2019թ.-ին ներկայացված համանման բողոքները (այսուհետ՝ նաև Բողոքներ) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Էլեկտրոգուպ» ՍՊԸ-ն, «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ն և «Ֆոր Սթեյջ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքներով խնդրել են՝

1. Արգելել Պատվիրատու՝ «Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ» ՊՈԱԿ-ին թիվ «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով «Ձայնային սարքավորումների» գնանշման հարցման գնման գործընթացում ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր,

2. Օրենքին հակասող և չեղյալ հայտարարել թիվ «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով «Ձայնային սարքավորումների» գնանշման հարցման ընթացակարգը,

3. Պարտավորեցնել Պատվիրատուին իրականացնել օրենքի պահանջներին համապատասխան (բաց մրցույթի ձևով) գնման նոր գործընթաց:

Բողոքներ քննող անձին «Էլեկտրոգուպ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը մակագրվել է 16.09.2019թ.-ին:

18.09.2019թ.-ին այն վերադարձվել է՝ բողոքում առկա խախտումները վերացնելու համար:

Բողոքը կրկին՝ վերադարձնելուց հետո Բողոքներ քննող անձին է մակագրվել 20.09.2019թ.-ին:

23.09.2019թ.-ին կայացված որոշմամբ «Էլեկտրոգուպ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը ընդունվել է վարույթ և 26.09.2019թ.-ին, 03.10.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքներ քննող անձին «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ի և «Ֆոր Սթեյջ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքները մակագրվել է 26.09.2019թ.-ին:

27.09.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքները ընդունվել են վարույթ և 03.10.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքների քննությունն ավարտվել է 03.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.10.2019թ.-ին:

2. <u>«Էլեկտրոգուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Էլեկտրոգուպ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«13.08.2019 թվականին «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ը հայտարարել է «Ձայնային սարքավորումների» ձեռքբերման նպատակով գնանշման հարցում (այսուհետ նաև Հարցում), որի արդյունքում ընտրված մասնակցին պետք է առաջարկվեր կնքել ձայնային սարքավորումների մատակարարման պայմանագիր:

Գնումների մասին ՀՀ օրենքի սահմանափակումները, ընթացակարգերը շրջանցելու և արագացված կարգով գնում իրականացնելու նպատակով, Պատվիրատուն գնման առարկան արհեստականորեն խմբավորել է 4 չափաբաժիններում մրցույթի փոխարեն սահմանելով գնանշման հարցում, ինչը Գնումների մասին ՀՀ օրենքի դրույթների ակնհայտ խախտում է:

Արդյունքում կոպտորեն խախտվել են ՀՀ օրենսդրության պահանջները, խեղաթյուրվել է պետական գնումների գործընթացը, ինչը հանգեցրել է ազատ մրցակցության պայմաններում գնման ընթացակարգին մասնակցելու և առաջարկներ ներկայացնելու Բողոք բերողի ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների սահմանափակման:

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրության 18-րդ հոդվածի (Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք) և Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի (յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները) դրույթները՝ ներկայացնում ենք «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված թիվ ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով «Ձայնային սարքավորումների» գնման գործընթացի վերաբերյալ սույն բողոքը հետևյալ հիմնավորմամբ:

07.08.2019 թվականին գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է Պատվիրատուի կողմից հաստատված Գնումների Պլանը (այսուհետ նաև՝ Պլան), որում ներկայացված ապրանքների ձեռքբերումը նախատեսվում էր իրականացվել բաց մրցույթի ձևով: Սակայն հետագայում Պատվիրատուն «անհասկանալի» և օրենքից չբխող պատճառներով որոշել է շրջանցել բաց մրցույթի ընթացակարգը և կրճատել գնման

գործընթացի ժամկետը: 16.08.2019 թվականին փոփոխություններով հրապարակված պլանում, որպես ապրանքների ձեռքբերման եղանակ նշվել է գծանշման հարցումը: Ընդ որում՝ անհասկանալի փրամաբանությամբ 07.08.2019 թ. գնումների պլանում նշված ոչ բոլոր ապրանքների գնումն է բաց մրցույթից դարձել գնանշման հարցման ընթացակարգով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Գնում կատարելու ընթացակարգերն են՝ էլեկտրոնային աճուրդը, մրցույթը, գծանշման հարցումը, մեկ անձից գնումը:»

Ընդ որում՝ Պատվիրատուն իրավասու է օրենքում նախատեսված ընթացակարգերից յուրաքանչյուրը ընտրել բացառապես օրենքում նշված հիմքերի առկայության դեպքում: Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Գնումը կարող է կատարվել գծանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը..»:

Օրենսդրի պահանջը պահպանելու և ապրանքները բաց մրցույթի փոխարեն գնանշման հարցման եղանակով ձեռք բերելու նպատակով Պատվիրատուն, արհեստականորեն, նույն բնութագրեր ունեցող գնումները բաժանել է թիվ 1 և թիվ 2 չափաբաժինների, որոնց գնային առաջակների գումարը (չափաբաժին 1 + չափաբաժին 2) գերազանցել է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը: Արդյունքում Պատվիրատուն խախտել է նաև Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որի համաձայն «Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է 1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով...»:

Պատվիրատուի իրական նպատակը եղել է ընդհանուր թվով 24 հատ ձայնային սարքավորում ձեռք բերելը, ինչը նշված է նաև Գնման պլանում:

Պատվիրատուն թիվ 1 և 2 չափաբաժիններում առանձնացրել է ամբողջությամբ համընկնող բնութագրեր ունեցող ապրանքներ, ինչպես նաև անփութությամբ թիվ 2 չափաբաժնի «տեխնիկական բնութագիրը» հատվածում թողել է նախապես որոշված խմբաքանակի մասին մրցույթի համար գրված տեխնիկական բնութագիրը «Նվազագույն 24 (12 L. 12R)»: Ակնհայտ է, որ Գնման պլանում նշված 24 հատ ձայնային սարքավորումը բաղկացած է 12 աջ և 12 ձախ բարձրախոսներից, վերջիններիս մալուխներից, ուժեղացուցիչներից և փոխադրելու սայլակներից:

Գնանշման հարցման թիվ 1 չափաբաժնում ընդգրկված է «Բարձրախոս գծային զանգված տեսակի 22 հատ», թիվ 2 չափաբաժնում ընդգրկված է .«Բարձրախոս գծային զանգված տեսակի - 2 հատ. նվազագույնը 24 (12Լ. 12Ю» ընդ որում, թե 1 և 2 չափաբաժիններում ընդգրկված բարձրախոսների տեխնիկական բնութագրերը նույնական են, դրանք իրարից ոչնչով չեն տարբերվում, նախատեսված են միասին որպես մեկ ամբողջական համալիր օգտագործելու համար և բացառապես միասին կարող են օգտագործվել ըստ նշանակության:

Պատվիրատուն փորձել է տպավորություն ստեղծել, որ 1-ին և 2-րդ չափաբաժիններում նշված բարձրախոսները տարբեր են, սակայն նույնական լինելու փաստը ակնհայտ է:

2-րդ չափաբաժնում նշված փոխադրելու դեպալները սայլակները, 1-ին չափաբաժնում առհասարակ նշված չեն, այլ նշվել են առանձին որպես 3-րդ չափաբաժին: Իրականում սովորաբար յուրաքանչյուր 4 բարձրախոսի համար նախատեսված է 1 սայլակ և անտրամաբանական է, որ 2-րդ չափաբաժնում ներառված 2 բարձրախոսի համար պետք է տրամադրվի սայլակ, իսկ 1-ին չափաբաժնի համար որևէ սայլակ պետք չէ տրամադրվի, բայց իրականում 1-ին չափաբաժնում ընդգրկված բարձրախոսների համար 3-րդ չափաբաժնով պետք է սայլակ տրամադրվի, ընդ որում 3-րդ չափաբաժնում էլ դրանց թիվը միտումնավոր նշված չէ:

Արդյունքում խախտվել է նաև Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը, որի համաձայն՝ «Չեն կայաղ սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին...»:

Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն չորս աշխատանքային օր է..:»:

Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ բաց մրցույթի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը հաշվարկվում է գնումների հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից: Բացառությամբ սույն օրենքի 2-րդ հողվածի 1-ին մասի 1-ին կետի «ղ» և «ե» ենթակետերում նշված պատվիրատուների, հայտերի ներկայացման ժամկետը առնվազն քառասուն օրացուցային օր է»:

Նկատի ունենալով բաց մրցույթի և գնանշման հարցման ընթացակարգերի միջև եղած տարբերությունները օրենսդիրը յուրաքանչյուրի համար համապատասխանաբար նախատեսել է հայտերի ներկայացման առնվազն քառասնօրյա և չորսօրյա ժամկետներ: Տվյալ կարգավորման տրամաբանությունը կայանում է նրանում, որ հաշվի առնելով բաց մրցույթի առավել մասշտաբային լինելը, բոլոր մասնակիցներին տրամադրվի ողջամիտ ժամկետ վերջինիս պատշաճ պատրաստվելու և խելամիտ առաջարկ ներկայացնելու համար: Տվյալ պարագայում, Պատվիրատուն, գնման առարկաները արհեստականորեն թիվ 1 և թիվ 2 չափաբաժիններում դասակարգելու միջոցով, սահմանափակել է արդար մրցակցության սկզբունքը անհիմն կերպով բարդացնելով անձանց հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Կազմակերպված հարցումը վերաբերում է «Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ»-ը բարձրակարգ ձայնային սարքավորումներով ապահովմանը, ինչն իրենից ենթադրում է բավականին բարդ գործընթաց, որին մեկշաբաթյա ժամկետում պատրաստվելը անհնարին է, քանի որ պահանջվող տեխնիկան խիստ մասնագիտական է և նախատեսված չէ լայն սպառման համար, արտադրվում է հատուկ պատվերով և բացառվում է, որ ՀՀ-ում որևէ անձ նշված քանակի և բնութագրերի տեխնիկա ունենա պահեստավորած: Նման տեխնիկա մատակարարելու համար ակնհայտորեն անհրաժեշտ էր բանակցել արտադրողի հետ հետևաբար յոթնօրյա ժամկետում պատշաճ մասնակցություն կարող էին ունենալ միայն սահմանափակ անձինք, կամ նրանք, որոնք կարող էին նախապես տեղեկացված լինել Պատվիրատուի նման մտադրությունների և պահանջվող տեխնիկայի բնութագրերին:

Մինչդեռ Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ «Գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են...»:

Պատվիրատուի կողմից թույլ տրված գնման գործընթացի խախտման արդյունքում սահմանափակել են յուրաքանչյուր անձի գնման գործընթացին մասնակցելու և արդար մրցակցության պայմաններում հաղթող ճանաչվելու Օրենքով երաշխավորված իրավունքները:»:

Ելնելով վերոգրյալից, «Էլեկտրոգուպ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Արգելել Պատվիրատու՝ «Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ» ՊՈԱԿ-ին թիվ «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով «Ձայնային սարքավորումների» գնանշման հարցման գնման գործընթացում ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր,

2. Օրենքին հակասող և չեղյալ հայտարարել թիվ «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով «Ձայնային սարքավորումների» գնանշման հարցման ընթացակարգը,

3. Պարտավորեցնել Պատվիրատուին իրականացնել օրենքի պահանջներին համապատասխան (բաց մրցույթի ձևով) գնման նոր գործընթաց:

3. <u>«Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«13.08.2019 թվականին «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ը հայտարարել է «Ձայնային սարքավորումների» ձեռքբերման նպատակով գնանշման հարցում (այսուհետ նաև Հարցում), որի արդյունքում ընտրված մասնակցին պետք է առաջարկվեր կնքել ձայնային սարքավորումների մատակարարման պայմանագիր:

Գնումների մասին ՀՀ օրենքի սահմանափակումները, ընթացակարգերը շրջանցելու և արագացված կարգով գնում իրականացնելու նպատակով, Պատվիրատուն գնման առարկան արհեստականորեն խմբավորել է 4 չափաբաժիններում մրցույթի փոխարեն սահմանելով գնանշման հարցում, ինչը Գնումների մասին ՀՀ օրենքի դրույթների ակնհայտ խախտում է:

Արդյունքում կոպտորեն խախտվել են ՀՀ օրենսդրության պահանջները, խեղաթյուրվել է պետական գնումների գործընթացը, ինչը հանգեցրել է ազատ մրցակցության պայմաններում գնման ընթացակարգին մասնակցելու և առաջարկներ ներկայացնելու Բողոք բերողի ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների սահմանափակման:

Սույնով ներկայացնում ենք «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված թիվ ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով «Ձայնային սարքավորումների» գնման գործընթացի վերաբերյալ սույն բողոքը հետևյալ հիմնավորմամբ:

07.08.2019 թվականին գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է Պատվիրատուի կողմից հաստատված Գնումների Պլանը (այսուհետ նաև՝ Պլան), որում ներկայացված ապրանքների ձեռքբերումը նախատեսվում էր իրականացվել բաց մրցույթի ձևով: Սակայն հետագայում Պատվիրատուն «անհասկանալի» և օրենքից չբխող պատճառներով որոշել է շրջանցել բաց մրցույթի ընթացակարգը և կրճատել գնման գործընթացի ժամկետը: 16.08.2019 թվականին փոփոխություններով հրապարակված պլանում, որպես ապրանքների ձեռքբերման եղանակ նշվել է գծանշման հարցումը: Ընդ

որում՝ անհասկանալի տրամաբանությամբ 07.08.2019 թ. գնումների պլանում նշված ոչ բոլոր ապրանքների գնումն է բաց մրցույթից դարձել գնանշման հարցման ընթացակարգով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գնում կատարելու ընթացակարգերն են՝ էլեկտրոնային աճուրդը, մրցույթը, գծանշման հարցումը, մեկ անձից գնումը:»:

Ընդ որում՝ Պատվիրատուն իրավասու է օրենքում նախատեսված ընթացակարգերից յուրաքանչյուրը ընտրել բացառապես օրենքում նշված հիմքերի առկայության դեպքում: Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գնումը կարող է կատարվել գծանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը..»:

Օրենսդրի պահանջը պահպանելու և ապրանքները բաց մրցույթի փոխարեն գնանշման հարցման եղանակով ձեռք բերելու նպատակով Պատվիրատուն, արհեստականորեն, նույն բնութագրեր ունեցող գնումները բաժանել է թիվ 1 և թիվ 2 չափաբաժինների որոնց գնային առաջակների գումարը (չափաբաժին 1 + չափաբաժին 2) գերազանցել է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը: Արդյունքում Պատվիրատուն խախտել է նաև Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որի համաձայն «Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է 1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով...»:

Պատվիրատուի իրական նպատակը եղել է ընդհանուր թվով 24 հատ ձայնային սարքավորում ձեռք բերելը, ինչը նշված է նաև Գնման պլանում:

Պատվիրատուն թիվ 1 և 2 չափաբաժիններում առանձնացրել է ամբողջությամբ համընկնող բնութագրեր ունեցող ապրանքներ, ինչպես նաև անփութությամբ թիվ 2 չափաբաժնի «տեխնիկական բնութագիրը» հատվածում թողել է նախապես որոշված խմբաքանակի մասին մրցույթի համար գրված տեխնիկական բնութագիրը «Նվազագույն 24 (12 L. 12R)»: Ակնհայտ է, որ Գնման պլանում նշված 24 հատ ձայնային սարքավորումը բաղկացած է 12 աջ և 12 ձախ բարձրախոսներից, վերջիններիս մալուխներից, ուժեղացուցիչներից և փոխադրելու սայլակներից:

Գնանշման հարցման թիվ 1 չափաբաժնում ընդգրկված է «Բարձրախոս գծային զանգված տեսակի 22 հատ», թիվ 2 չափաբաժնում ընդգրկված է .«Բարձրախոս գծային զանգված տեսակի - 2 հատ. նվազագույնը 24 (12L. 12Ю» ընդ որում, թե 1 և 2

չափաբաժիններում ընդգրկված բարձրախոսների տեխնիկական բնութագրերը նույնական են, դրանք իրարից ոչնչով չեն տարբերվում, նախատեսված են միասին որպես մեկ ամբողջական համալիր օգտագործելու համար և բացառապես միասին կարող են օգտագործվել ըստ նշանակության:

Պատվիրատուն փորձել է տպավորություն ստեղծել, որ 1-ին և 2-րդ չափաբաժիններում նշված բարձրախոսները տարբեր են, սակայն նույնական լինելու փաստը ակնհայտ է:

2-րդ չափաբաժնում նշված փոխադրելու դետալները սայլակները, 1-ին չափաբաժնում առհասարակ նշված չեն, այլ նշվել են առանձին որպես 3-րդ չափաբաժին: Իրականում սովորաբար յուրաքանչյուր 4 բարձրախոսի համար նախատեսված է 1 սայլակ և անտրամաբանական է, որ 2-րդ չափաբաժնում ներառված 2 բարձրախոսի համար պետք է տրամադրվի սայլակ, իսկ 1-ին չափաբաժնի համար որևէ սայլակ պետք չէ տրամադրվի, բայց իրականում 1-ին չափաբաժնում ընդգրկված բարձրախոսների համար 3-րդ չափաբաժնով պետք է սայլակ տրամադրվի, ընդ որում 3-րդ չափաբաժնում էլ դրանց թիվը միտումնավոր նշված չէ:

Արդյունքում խախտվել է նաև Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը, որի համաձայն՝

«Չեն կայաղ սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին...»:

Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն չորս աշխատանքային օր է...:»

Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝

Բաց մրցույթի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը հաշվարկվում է գնումների հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից:

2. Բացառությամբ սույն օրենքի 2-րդ հողվածի 1-ին մասի 1-ին կետի «ղ» և «ե» ենթակետերում նշված պատվիրատուների, հայտերի ներկայացման ժամկետը առնվազն քառասուն օրացուցային օր է»:

Նկատի ունենալով բաց մրցույթի և գնանշման հարցման ընթացակարգերի միջև եղած տարբերությունները օրենսդիրը յուրաքանչյուրի համար համապատասխանաբար նախատեսել է հայտերի ներկայացման առնվազն քառասնօրյա և չորսօրյա ժամկետներ: Տվյալ կարգավորման տրամաբանությունը կայանում է նրանում, որ հաշվի առնելով բաց մրցույթի առավել մասշտաբային լինելը, բոլոր մասնակիցներին տրամադրվի ողջամիտ ժամկետ վերջինիս պատշաճ պատրաստվելու և խելամիտ առաջարկ ներկայացնելու համար: Տվյալ պարագայում, Պատվիրատուն, գնման առարկաները արհեստականորեն թիվ 1 և թիվ 2 չափաբաժիններում դասակարգելու միջոցով, սահմանափակել է արդար մրցակցության սկզբունքը անհիմն կերպով բարդացնելով անձանց հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:»:

Ելնելով վերոգրյալից, «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Արգելել Պատվիրատու՝ «Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ» ՊՈԱԿ-ին թիվ «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով «Ձայնային սարքավորումների» գնանշման հարցման գնման գործընթացում ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր,

2. Օրենքին հակասող և չեղյալ հայտարարել թիվ «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով «Ձայնային սարքավորումների» գնանշման հարցման ընթացակարգը,

3. Պարտավորեցնել Պատվիրատուին իրականացնել օրենքի պահանջներին համապատասխան (բաց մրցույթի ձևով) գնման նոր գործընթաց:

4. <u>«Ֆոր Սթեյջ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Ֆոր Սթեյջ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«13.08.2019 թվականին «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ը հայտարարել է «Ձայնային սարքավորումների» ձեռքբերման նպատակով գնանշման հարցում (այսուհետ նաև Հարցում), որի արդյունքում ընտրված մասնակցին պետք է առաջարկվեր կնքել ձայնային սարքավորումների մատակարարման պայմանագիր:

Գնումների մասին ՀՀ օրենքի սահմանափակումները, ընթացակարգերը շրջանցելու և արագացված կարգով գնում իրականացնելու նպատակով, Պատվիրատուն գնման առարկան արհեստականորեն խմբավորել է 4 չափաբաժիններում մրցույթի փոխարեն

սահմանելով գնանշման հարցում, ինչը Գնումների մասին ՀՀ օրենքի դրույթների ակնհայտ խախտում է:

Արդյունքում կոպտորեն խախտվել են ՀՀ օրենսդրության պահանջները, խեղաթյուրվել է պետական գնումների գործընթացը, ինչը հանգեցրել է ազատ մրցակցության պայմաններում գնման ընթացակարգին մասնակցելու և առաջարկներ ներկայացնելու Բողոք բերողի ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների սահմանափակման:

Սույնով ներկայացնում ենք «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված թիվ ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով «Ձայնային սարքավորումների» գնման գործընթացի վերաբերյալ սույն բողոքը հետևյալ հիմնավորմամբ:

07.08.2019 թվականին գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է Պատվիրատուի կողմից հաստատված Գնումների Պլանը (այսուհետ նաև՝ Պլան), որում ներկայացված ապրանքների ձեռքբերումը նախատեսվում էր իրականացվել բաց մրցույթի ձևով: Սակայն հետագայում Պատվիրատուն «անհասկանալի» և օրենքից չբխող պատճառներով որոշել է շրջանցել բաց մրցույթի ընթացակարգը և կրճատել գնման գործընթացի ժամկետը: 16.08.2019 թվականին փոփոխություններով հրապարակված պլանում, որպես ապրանքների ձեռքբերման եղանակ նշվել է գծանշման հարցումը: Ընդ որում՝ անհասկանալի տրամաբանությամբ 07.08.2019 թ. գնումների պլանում նշված ոչ բոլոր ապրանքների գնումն է բաց մրցույթից դարձել գնանշման հարցման ընթացակարգով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Գնում կատարելու ընթացակարգերն են՝

էլեկտրոնային աճուրդը.

մրցույթը

գծանշման հարցումը

մեկ անձից գնումը:»

Ընդ որում՝ Պատվիրատուն իրավասու է օրենքում նախատեսված ընթացակարգերից յուրաքանչյուրը ընտրել բացառապես օրենքում նշված հիմքերի առկայության դեպքում: Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Գնումը կարող է կատարվել գծանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը..»:

Օրենսդրի պահանջը պահպանելու և ապրանքները բաց մրցույթի փոխարեն գնանշման հարցման եղանակով ձեռք բերելու նպատակով Պատվիրատուն, արհեստականորեն, նույն բնութագրեր ունեցող գնումները բաժանել է թիվ 1 և թիվ 2 չափաբաժինների որոնց գնային առաջակների գումարը (չափաբաժին 1+ չափաբաժին 2) գերազանցել է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը: Արդյունքում Պատվիրատուն խախտել է նաև Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որի համաձայն «Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է 1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով...»:

Պատվիրատուի իրական նպատակը եղել է ընդհանուր թվով 24 հատ ձայնային սարքավորում ձեռք բերելը, ինչը նշված է նաև Գնման պլանում:

Պատվիրատուն թիվ 1 և 2 չափաբաժիններում առանձնացրել է ամբողջությամբ համընկնող բնութագրեր ունեցող ապրանքներ, ինչպես նաև անփութությամբ թիվ 2 չափաբաժնի «տեխնիկական բնութագիրը» հատվածում թողել է նախապես որոշված խմբաքանակի մասին մրցույթի համար գրված տեխնիկական բնութագիրը «Նվազագույն 24 (12 Լ. 12R)»: Ակնհայտ է, որ Գնման պլանում նշված 24 հատ ձայնային սարքավորումը բաղկացած է 12 աջ և 12 ձախ բարձրախոսներից, վերջիններիս մալուխներից, ուժեղացուցիչներից և փոխադրելու սայլակներից:

Գնանշման հարցման թիվ 1 չափաբաժնում ընդգրկված է «Բարձրախոս գծային զանգված տեսակի 22 հատ», թիվ 2 չափաբաժնում ընդգրկված է .«Բարձրախոս գծային զանգված տեսակի - 2 հատ. նվազագույնը 24 (12Լ. 12Ю» ընդ որում, թե 1 և 2 չափաբաժիններում ընդգրկված բարձրախոսների տեխնիկանական բնութագրերը նույնական են, դրանք իրարից ոչնչով չեն տարբերվում, նախատեսված են միասին որպես մեկ ամբողջական համալիր օգտագործելու համար և բացառապես միասին կարող են օգտագործվել ըստ նշանակության:

Պատվիրատուն փորձել է տպավորություն ստեղծել, որ 1-ին և 2-րդ չափաբաժիններում նշված բարձրախոսները տարբեր են, սակայն նույնական լինելու փաստը ակնհայտ է:

2-րդ չափաբաժնում նշված փոխադրելու դետալները սայլակները, 1-ին չափաբաժնում առհասարակ նշված չեն, այլ նշվել են առանձին որպես 3-րդ չափաբաժին: Իրականում սովորաբար յուրաքանչյուր 4 բարձրախոսի համար նախատեսված է 1 սայլակ և

անտրամաբանական է, որ 2-րդ չափաբաժնում ներառված 2 բարձրախոսի համար պետք է տրամադրվի սայլակ, իսկ 1-ին չափաբաժնի համար որևէ սայլակ պետք չէ տրամադրվի, բայց իրականում 1-ին չափաբաժնում ընդգրկված բարձրախոսների համար 3-րդ չափաբաժնով պետք է սայլակ տրամադրվի, ընդ որում 3-րդ չափաբաժնում էլ դրանց թիվը միտումնավոր նշված չէ:

Արդյունքում խախտվել է նաև Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը, որի համաձայն՝

«Չեն կայաղ սահմանվել մասնակցի՛ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին...»:

Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն չորս աշխատանքային օր է...:»

Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝

Բաց մրցույթի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը հաշվարկվում է գնումների հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից:

2. Բացառությամբ սույն օրենքի 2-րդ հողվածի 1-ին մասի 1-ին կետի «ղ» և «ե» ենթակետերում նշված պատվիրատուների, հայտերի ներկայացման ժամկետը առնվազն քառասուն օրացուցային օր է»:

Նկատի ունենալով բաց մրցույթի և գնանշման հարցման ընթացակարգերի միջև եղած տարբերությունները օրենսդիրը յուրաքանչյուրի համար համապատասխանաբար նախատեսել է հայտերի ներկայացման առնվազն քառասնօրյա ե չորսօրյա ժամկետներ: Տվյալ կարգավորման տրամաբանությունը կայանում է նրանում, որ հաշվի առնելով բաց մրցույթի առավել մասշտաբային լինելը, բոլոր մասնակիցներին տրամադրվի ողջամիտ ժամկետ վերջինիս պատշաճ պատրաստվելու և խելամիտ առաջարկ ներկայացնելու համար: Տվյալ պարագայում, Պատվիրատուն, գնման առարկաները արհեստականորեն թիվ 1 և թիվ 2 չափաբաժիններում դասակարգելու միջոցով, սահմանափակել է արդար մրցակցության սկզբունքը անհիմն կերպով բարդացնելով անձանց հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:»:

Ելնելով վերոգրյալից, «Ֆոր Սթեյջ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Արգելել Պատվիրատու՝ «Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ» ՊՈԱԿ-ին թիվ «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով «Ձայնային սարքավորումների» գնանշման հարցման գնման գործընթացում ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր,

2. Օրենքին հակասող և չեղյալ հայտարարել թիվ «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով «Ձայնային սարքավորումների» գնանշման հարցման ընթացակարգը,

3. Պարտավորեցնել Պատվիրատուին իրականացնել օրենքի պահանջներին համապատասխան (բաց մրցույթի ձևով) գնման նոր գործընթաց:

5. <u>«Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.09.2019թ.-ի և 27.09.2019թ.-ի գրություններով դիմել «Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ» ՊՈԱԿ-ին՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էլեկտրոգուպ» ՍՊԸ-ի կողմից 20.09.2019թ.-ին, «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ի և «Ֆոր Սթեյջ» ՍՊԸ-ի կողմից 26.09.2019թ.-ին ներկայացված բողոքների վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 30.09.2019թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ի, «Տոթ Սթեյջ» ՍՊԸ-ին և «Սի էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նույնաբովանդակությամբ բողոքի աեքստերը, որոնք Ձեր մոտ քննվում են թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/68 ծածկագրով բողոքի շրջանակներում, տեղեկացնում եմ, որ «Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ» ՊՈԱԿ-ը գնման գործընթացը արագացված կարգով իրականացնելու խնդիր չի ունեցել, առավել ևս գնումների մասին ՀՀ օրենքի սահմանափակումները շրջանցելու միջոցով, նման խնդիր ունենալու պարագայում գնման ընթացակարգի ձևի ընտրության ժամանակ նախապատվությունը կտրվեր ոչ թե գնանշման հարցման ձևով իրականացմանը, այլ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի գ) ենթակետով սահմանված մեկ անձից գնման ձևին:

Անդրադառնալով Բողորաբերների այն պնդմանը, որ Պատվիրատուի կողմից գնման առարկան արհեստականորեն է խմբավորվել 4 չափաբաժիններում, տեղեկացնում եմ, որ

խմբավորումը չի կարող համարվել արհեստական, քանի որ Պատվիրատուն չի խուսափել մրցակցային գնման ձևի կիրառումից, իսկ գնումների մասին ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների, ինչպես նաև արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով: Միևնույն հոդվածի 2-րդ մասի համաձայն արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Գնման ձևի ընտրության վերաբերյալ տեղեկացնում եմ, որ համաձայն Կարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետի գնման ընթացակարգը կազմակերպելիս, Օրենքի 3-րդ բաժնով նախատեսված պայմաններից բացի, պետք է հաշվի առնել, որ եթե գնումների միասնական անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերում ներառված՝ վերջնական սպառման ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների թազային միավորի յոթանասունապատիկը, ապա գնման առարկայի ձեռքբերումը կարող է իրականացվել գնանշման հարցման ձևով:

Հիմք ընդունելով Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթները համաձայն որի, եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, առաջարկում եմ բողոքի քննության շրջանակներում Բողոքաբերների կողմից ներկայացված գնման առարկայի բնութագրերին վերաբերող հարցերին չանդրադառնալ (Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն գնման առարկայի բնութագիր է համարվում գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները):

Ամփոփելով Բողոքաբերների կողմից ներկայացված բողոքների բովանդակությունը, հայտնում և հավաստում եմ, որ ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգը կազմակերպված է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով:»:

6. <u>ԳԲՔԱ-LO-2019/68 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ» ՊՈԱԿ-ի կողմից ձայնային սարքավորումների ձեռքբերման նպատակով 15.08.2019թ.-ին հայտարարվել է «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով ձեռքբերվող ապրանքները խնբավորվել է 4 չափաբաժինների:

Պատվիրատուի կողմից 19.08.2019թ.-ին հրապարակված 2019թ.-ի գնումների պլանի փոփոխության համաձայն (հաստատված՝ 16.08.2019թ.-ին)՝ թիվ 32341160, 37320000 և 32341110 CPV դասակարգման միջանցիկ կոդերով նախատեսված համապատասխանաբար՝ ձայնային սարքավորումներ, երաժշտական գործիքների մասեր և պարագաներ ու բարձրախոսներ ապրանքների մասով որպես գնման ձև է նշվել գնանշման հարցումը, իսկ նախկինում՝ 07.08.2019թ.-ին հաստատված 2019թ.-ի գնումների պլանի փոփոխության համաձայն՝ վերը նշված ապրանքների մասով որպես գնման ձև է նշված եղել բաց մրցույթը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել հետևյալ 4 մասնակիցները. «Բրիդջ» ՍՊԸ-ն, «Ֆոր Սթեյջ» ՍՊԸ-ն, «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ն և «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագիր «Օվացիա» պրոդյուսերական կենտրոն ՍՊԸ-ի հետ):

7. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Էլեկտրոգուպ» ՍՊԸ-ի, «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ի և «Ֆոր Սթեյջ» ՍՊԸ-ի կողմից համապատասխանաբար 20.09.2019թ.-ին ներկայացված բողոքը և 26.09.2019թ.-ին ներկայացված համանման բողոքները անհիմն են և ենթակա են ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրեքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերն են՝

1) էլեկտրոնային աճուրդը.

2) մրցույթը.

3) գնանշման հարցումը.

4) մեկ անձից գնումը:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով:

Նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ...:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ» ՊՈԱԿ-ի կողմից 19.08.2019թ.-ին հրապարակված 2019թ.-ի գնումների պլանի փոփոխության համաձայն (հաստատված՝ 16.08.2019թ.-ին)՝ թիվ 32341160, 37320000 և 32341110 CPV դասակարգման միջանցիկ կոդերով նախատեսված համապատասխանաբար՝ ձայնային սարքավորումներ, երաժշտական գործիքների մասեր և պարագաներ ու բարձրախոսներ ապրանքների մասով որպես գնման ձև է նշվել գնանշման հարցումը, իսկ նախկինում՝ 07.08.2019թ.-ին հաստատված 2019թ.-ի գնումների պլանի փոփոխության համաձայն՝ վերը նշված ապրանքների մասով որպես գնման ձև է նշված եղել բաց մրցույթը:

Պատվիրատուի կողմից ձայնային սարքավորումների ձեռքբերման նպատակով 15.08.2019թ.-ին հայտարարվել է «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ՝ խնբավորած 4 չափաբաժինների, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Բրիդջ» ՍՊԸ-ն, «Ֆոր Սթեյջ» ՍՊԸ-ն, «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ն և «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագիր «Օվացիա» պրոդյուսերական կենտրոն ՍՊԸ-ի հետ):

Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում

իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ» ՊՈԱԿ-ը ձայնային սարքավորումների ձեռքբերման նպատակով կիրառելով մրցակցային գնման ձև, այն է՝ հայտարարելով գնանշման հարցման ընթացակարգ, ապրանքները խնբավորելով և դրանք բաժանելով 4 չափաբաժինների, որևէ կերպ չի խուսափել մրցակցային գնման ձևի կիրառումից, որպիսի գործողությունների արդյուքնում Պատվիրատի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ պահանջ չի խախտվել: Ավելին, Պատվիրատուի նման գործողությունները հնարավոր մասնակիցների համար ապահովել է մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը, որին էլ մասնակցության հայտ է ներկայացրել 4 (չորս) մասնակից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերությունների կողմից բողոքներով բերված փաստերն ու հանգամանքները անհիմն են, իսկ Պատվիրատուի գործողությունների արդյունքում չեն սահմանափակվում հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները: Հատկապես այն դեպքում, երբ Պատվիրատուի կողմից ներկայացված բողոքի առարկություններով հերքվում են Բողոքաբերի կողմից նշված հնարավոր մասնակիցների մրցակցության և գնումների օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման առկայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էլեկտրոգուպ» ՍՊԸ-ի, «Էմ Սի Էֆ Փրոդաքշն» ՍՊԸ-ի և «Ֆոր Սթեյջ» ՍՊԸ-ի կողմից համապատասխանաբար 20.09.2019թ.-ին ներկայացված բողոքը և 26.09.2019թ.-ին ներկայացված համանման բողոքները մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ